

Կ-189-14.06.2019-ՏՀ-011/0

(Կ-189-14.06.2019-ՏՀ-011/0)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
~~ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ~~ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի
Հանրապետության 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-295 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 19-րդ հոդվածի 1-ին մասում «Անշարժ գույքի կադաստրի կոմիտեն» բառերը փոխարինել «Կադաստրի կոմիտեն» բառերով:

Հոդված 2. Օրենքի 27-րդ հոդվածը լրացնել ~~հետեւյալ բովանդակությամբ~~ նոր 7-րդ եւ 8-րդ մասերով:

«7. Դիմողի ներկայացրած գրանցման վկայականում գրառված տվյալների փոփոխման անհրաժեշտության դեպքում դիմողին տրամադրվում է նոր գրանցման վկայական:»:

8. Մինչեւ 2019 թվականի հուլիսի 1-ը տրամադրված գրանցման վկայականը գրանցված իրավունքի սուբյեկտի կամ նրա կողմից լիազորված անձի, իսկ սուբյեկտի մահվան դեպքում՝ նոտարի պահանջով փոխարինվում է նոր գրանցման վկայականով՝ պետական գրանցման իրական ամսաթվի վերաբերյալ նշումով, եթե նույնիսկ չի առաջանում սույն հոդվածի 7-րդ մասում նշված գրառված տվյալների փոփոխման անհրաժեշտության:»:

Հոդված 3. Օրենքի 31-րդ հոդվածում՝

1) 1.1-ին մասը շարադրել ~~հետեւյալ նոր~~ խմբագրությամբ:

ա. «1.1. Կառավարման ավտոմատացված համակարգերի կիրառմամբ անշարժ գույքի պետական ռեգիստրի գործառնությունների արդյունքում կազմված ավարտական փաստաթղթերը կազմվում եւ հաստատվում են էլեկտրոնային համակարգի միջոցով:»:

2) լրացնել ~~հետեւյալ նոր~~ բովանդակությամբ 1.2-րդ եւ 1.3-րդ մասերով:

ա. «1.2. Սույն հոդվածի 1.1-ին մասով սահմանված փաստաթղթում զետեղվում է կառավարման ավտոմատացված համակարգի միջոցով ինքնաշխատ գեներացվող փաստաթղթի համարը եւ փաստաթղթի իսկության ստուգման համար նախատեսված գաղտնաբառը:

բ. 1.3. Սույն հոդվածի 1.1-ին մասով սահմանված փաստաթղթերի իսկությունը, իսկ գրանցման վկայականների դեպքում՝ նաեւ դրանց վավերականությունը ստուգվում է անշարժ գույքի պետական ռեգիստրի պաշտոնական կայքէջի էլեկտրոնային համակարգի միջոցով՝ սույն հոդվածի 1.2-րդ մասում ամրագրված փաստաթղթի համարի եւ փաստաթղթի իսկության ստուգման համար նախատեսված գաղտնաբառի մուտքագրմամբ:»:

Հոդված 4. Օրենքի 34-րդ հոդվածը լրացնել ~~հետեւյալ նոր~~ բովանդակությամբ 7-րդ մասով:

«7. Պետական գրանցման ժամանակ թույլ տրված սխալի ուղղման հիմքով տրամադրվում է նոր գրանցման վկայական՝ ուղղման վերաբերյալ նշումով:»:

Հոդված 5. Օրենքի 51-րդ հոդվածի 2-րդ մասում «անշարժ գույքի պետական ռեգիստրի սպասարկման գրասենյակի կնիքով» բառերը փոխարինել «պայմանագրի կողմերի ստորագրությունների իսկությունը ճանաչող անձի ստորագրությամբ» բառերով:

Հոդված 6. Օրենքի 73-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 8-րդ կետից հանել «եւ նոր գրանցման վկայական տրամադրելու կամ վկայականում փոփոխություն կատարելու» բառերը.

2) 1-ին մասի 14-րդ եւ 14.1-ին կետերն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 7. Օրենքի 74-րդ հոդվածում՝

1) 4-րդ եւ 5-րդ մասերից հանել «, կամ վկայականում համապատասխան փոփոխությունը կատարվում» բառերը.

2) 6-րդ մասը շարադրել ~~հետեւյալ նոր~~ խմբագրությամբ.

«6. Մինչեւ 2019 թվականի հուլիսի 1-ը տրամադրված գրանցման վկայականը նոր գրանցման վկայականով փոխարինվում է դրա համար դիմումը սույն օրենքով սահմանված կարգով ներկայացվելու օրվանից 2-րդ աշխատանքային օրը:».

3) 7-րդ մասում «կատարվում է» բառերից հետո լրացնել «, եւ դրա հիմքով նոր գրանցման վկայականը կամ տեղեկատվությունը տրամադրվում է» բառերը:

Հոդված 8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում ~~2019 թվականի հուլիսի 1-ից պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:~~